ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2026թ. **N ----Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՐԻԳՈՐ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ. 2387-Ն որոշման հավելվածով սահմանված կարգի 4-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Սիլիկյան թաղամասի 11-րդ փողոցն (զուգահեռ է Սիլիկյան 12-րդ փողոցին) անվանակոչել հայ կոմպոզիտոր Գրիգոր Եղիազարյանի անվամբ՝ «Գրիգոր Եղիազարյան փողոց»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՄՇԱԿՈՒՅԹԻ, ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ **ՀԱՅԿ ՄԻՐԶՈՅԱՆ**

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ **ՔՐԻՍՏԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ **ԶԱՐՈՒՀԻ ԱՂԱՋԱՆՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՐԻԳՈՐ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Գրիգոր Եղիազարյանը ծնվել է 1908 թվականին Սուրմալուի գավառի Բլուր գյուղում, իսկ ավելի ուշ իր բազմանդամ ընտանիքի հետ տեղափոխվել է Երևան: 1918-1920 թվականների ընթացքում կորցրել է բոլոր մերձավորներին և որբացել: Պատանեկության տարիներին անցել է զինվորական ծառայության: Կոմպոզիտորը շուրջ յոթ տարի զինվորական նվագախմբի փողհարն է եղել: Ամենօրյա պարապմունքների շնորհիվ ձգտել է մասնագիտանալ երաժշտության ասպարեզում: Ապագա կոմպոզիտորը ուսում ստանալու նպատակով սկզբում սովորել է Մոսկվայի կոնսերվատորիային կից երաժշտական ուսումնարանի երաժշտության տեսության, այնուհետև կոմպոզիցիայի դասարանում: 1935 թվականին ավարտել է Մոսկվայի կոնսերվատորիան, որտեղ սովորում էր ռուս կոմպոզիտոր և մանկավարժ Ն.Մյասկովսկու ստեղծագործական դասարանում: Մոսկվայի կոնսերվատորիայում նա լուրջ, հիմնավոր տեսական ու գործնական գիտելիքներ է ձեռք բերել: Կոնսերվատորիան ավարտելուց հետո կոմպոզիտորը տեղափոխվել է Լենինական, այստեղ նա համագործակցել է Մռավյանի անվան դրամատիկական թատրոնի կոլեկտիվի հետ: Երաժշտություն է գրել տարբեր ներկայացումների համար՝ Ուիլյամ Շեքսպիրից մինչև երիտասարդ հայ դրամատուրգների պիեսներ: Սիրել է թատրոնը, որն էլ երաժշտի առջև ստեղծագործական լայն ասպարեզ է բացել: Լենինականում սկիզբ է առել գործունեության մի այլ բնագավառ ևս՝ մանկավարժական աշխատանքը: Երևանում բնակություն է հաստատելը 1938 թվականին: Այս տարիներին նույնպես շարունակել ստեղծագործական աշխատանքը, ինչպես նաև գրել երաժշտություն Լենինականի և Երևանի գեղարվեստական թատրոնների համար:

Ստեղծագործական աշխատանքին համընթաց նա մանկավարժական գործունեություն է ծավալել Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանում և Երևանի կոնսերվատորիայում: Սկզբում ղեկավարել է գործիքավորման, իսկ 1948 թվականից չորս տասնամյակ անընդմեջ՝ ստեղծագործական դասարանը:

1948 թվականից դասավանդել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում : 1953-1957 թվականներին եղել է ՀԿՄ վարչության նախագահ, 1954-1960 թվականներին՝ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ռեկտոր:

Գրիգոր Եղիազարյանը հայ արդի կոմպոզիտորական դպրոցի հիմնադիրներից է նրա սաներից են Գևորգ Արմենյանը, Ալեքսանդր Աճեմյանը, Էմին Արիստակեսյանը, Էդուարդ Բաղդասարյանը, Գրիգոր Հախինյանը, Էդգար Հովհաննիսյանը, Գեղունի Չթչյանը, Մարտուն Իսրայելյանը, Երվանդ Երկանյանը, Էդուարդ Հայրապետյանը, Աշոտ Զոհրաբյանը, Նուբար Ասլանյանը և ուրիշներ:

Հայրենական մեծ պատերազմի փորձությունների շրջանում ծնվեց «Հայաստան» սիմֆոնիկ պոեմը՝ կոմպոզիտորի առաջին մեծածավալ կտավը, որը 40-ական թվականների ազգային սիմֆոնիկ երաժշտության լուրջ նվաճումների խորհրդանիշն եղավ:

Եղիազարյանի ստեղծագործությունների ցանկը ծավալուն չէ, համեստ է, բայց դա փոխհատուցվում է ազգային արվեստում նոր ուղիներ հայտանշող ինքնատիպությամբ, հայ պրոֆեսիոնալ երաժշտությունը իրականության արտացոլման նոր ձևով հարստացնելով:

Եղիագարյանի գեղարվեստական աշխարհը սնող ակունքները բազմաբնույթ են, բայց առաջնայինն ազգայինն է: Եղիազարյանի մտածողության ազգային բնույթը բնական է դարձնում ժողովրդական երաժշտության բոլոր բնագավառներին անմիջականորեն կամ միջնորդավորված հաղորդակից լինելը: Ժողովրդական երգերի ու պարերի հմուտ օգտագործման օրինակներից են «Կալի երգը»՝ «Հայաստան» սիմֆոնիկ պոեմում, «Ամպել ա, տուն չի գալիսը»՝ Ջութակի կոնցերտում: Ժողովրդական մի շարք մեղեդիներ տեղ են գտել «Սևան» բալետում, որոնցից «Նուբար, Նուբարը» ոչ միայն լայտթեմայի նշանակություն է ձեռք բերել, այլև դարձել ժողովրդական մեղեդու օգտագործման յուրատեսակ

բարձրակետերից մեկը՝ իր նրբաճաշակությամբ, գործիքային հնչերանգների հնարամտությամբ ու հարազատությամբ ազգայինին:

Եղիազարյանը որդեգրել է Ալեքսանդր Սպենդիարյանի, Ռոմանոս Մելիքյանի, բայց ամենից ավելի Կոմիտասի ստեղծագործական սկզբունքները:Կոմպոզիտորին հոգեհարազատ են հատկապես իմպրեսիոնիզմին բնորոշ այնպիսի դրսևորումներ, ինչպիսիք են պատկերայնությունը, արտահայտիչ ու ճկուն երաժշտական լեզուն, հնչյունային-գունային միջոցները: Սեփական գեղարվեստական դիրքորոշումը, գեղարվեստական արժեքների նկատմամբ ինքնուրույն գեղագիտական հայացքը, հնարավորություն տվեցին ստեղծելու իր սեփական նկարագիրն ունեցող ազգային աշխարհը:

Հիմք ընդունելով վերոնշյալը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման 17-րդ կետը՝ առաջարկվում է Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Սիլիկյան թաղամասի 11-րդ փողոցն անվանակոչել հայ կոմպոզիտոր Գրիգոր Եղիազարյանի անվամբ՝ «Գրիգոր Եղիազարյան փողոց»:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ սահմանված կարգի 4-րդ կետով՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՄՇԱԿՈՒՅԹԻ, ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՀԱՅԿ ՄԻՐԶՈՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՔՐԻՍՏԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԶԱՐՈՒՀԻ ԱՂԱՋԱՆՅԱՆ